Արձանագրություն 4

«ՇՀԱՊՁԲ-15/16-ՁԻԱՀ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով բժշկական սարքերի գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման կասեցված նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 24 հունիսի 2016թ.
Անցկացման ժամը՝ 14:30
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Սոֆիա Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝	Հասմիկ Թամրազյան
	Անահիտ Ասատրյան
	Մերի Մարկոսյան
	Մերի Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արամ Խաչատրյան

I. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան)

1.1 Հանձնաժողովը որոշեց.

- անբավարար գնահատել և մերժել «ՌՈՄԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ սահմանված ժամկետներում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով (ՀՀ Կառավարության 30.01.2015թ. N 105-Ն որոշման 47-րդ կետ), և N 2, N 3 և N 8 չափաբաժինների համար փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղը (2-րդ տեղ) զբաղեցրած մասնակիցներին (N 2 չափաբաժնի համար՝ «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ, N 3 չափաբաժնի համար՝ «ԷՄ ԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԱՅԵՆՍ» ՍՊԸ, N 8 չափաբաժնի համար՝ «ՎԻՈԼԱ» ՍՊԸ):
- N 9 չափաբաժնի մասով մերժել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ տվյալ չափաբաժնի համար ցածր գնի հիմնավորում չներկայացնելու հիմքով (ՀՀ Կառավարության 30.01.2015թ. N 105-Ն որոշման 47-րդ կետ), և N 9 չափաբաժնի համար փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղը (2-րդ տեղ) զբաղեցրած մասնակցին՝ «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

II. Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

(նախագահ՝ Սոֆիա Գրիգորյան)

3.1. Հանձնաժողովը որոշեց.

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի անդամների կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի փաստաթղթերի գնահատման թերթիկները հանձնաժողովի քարտուղարին տրամադրելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, հասցեն՝ Աճառյան 2, N 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ս.Գրիգորյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Հ.Թամրազյան	(ստորագրություն)
	Ա.Ասատրյան	(ստորագրություն)
	Մ.Մարկոսյան	(ստորագրություն)
	Մ.Գրիգորյան	(ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա.Խաչատրյան	(ստորագրություն)